զի 'ի դէպ ժամանակի ցուցանել զայն, յորմէ չունէին Հայք բնաւին տեղեկութիւն։ Այլ այս ատելութիւն նոցին ոչ միայն էր ընդդէմ Հայոց՝ այլ և Լատինաց, հակառակ Կայսերական դաշնագրոյն։ Եւ զի մի յայտնի լիցի գործն, այլով ինն եղանակաւ առին զայն 'ի դանձատանէ (Մալիյէ)։ Այլ Լատինք յորժամ իրաղգաց եղեն այսմ, ետուն ջնջել և բառնալ 'ի միջոյ զհրովարտակն զայն յարձանագրութենէ դիւանին՝ ձեռամբ Դեսպանին Գաղղիոյ, և յանդիմանեցաւ Ցոյն պատրիարքն Երուսաղէմի։ Իսկ Հայք գոլով ազգ անզօր և անկարող՝ կարօտին միայն շնորհաց և դթութեան բարերար Տեառնդ։ Ցոյնք 'ի սմին նուագի բացայայտ ետուն դրել 'ի հրովարտակին զիրքեր 'դմբեթն 'ի վերայ Գերեզմանին Քրիստոսի, զի 'ի Ղնասիլ նորին՝ ինքեանք չինեսցեն, և այս դիտաւորութիւն նոցին՝ ոչ միայն վասն Լատինաց է, այլ նաեւ վասն Հայոց. և 'ի հաստատեալ հրովարտակի նոցին զոր պահեալ են՝ յիշին նաեւ Հայք, և յայսմ յամենայնէ յայտնի լինելով ատելութիւն նոցին, կասկածիմք և մանաւանդ թէ երկնչիմք իսկ, մի' գուցէ սակաւ առ սակաւ յափշտակեալ զիրաւունս մեր բարձցեն 'ի միջոյ։

Ի կարգս անհիմն բանից դասելի է և այն սնոտի պատճառանք նոցին, զոր յօդեն 'ի վերայ Հայոց, իբր նոքա ապաւինեալ են միշտ 'ի շնորհս դատաւորին Երուսաղէմի։ Սակայն ըստ տրամադրութեան վաւերեալ թղթոց մերոց, և Տէր Հենրի հրովարտակին Ցունաց, կարի դիւրին է յայտնել զարդարութիւնն և զիրաւունս, զի զօրութիւնք վաւերեալ գրոցն Հայոց և եղելութիւնք գործոցն, յայտնի հռչակեալ է անդ յԵրուսաղէմ. ոստիկանք և պաշտօնեայք Նորոգութեան ցարդ կան մնան անդ, և Տէրութիւնն ունի կատարեալ վստահութիւն 'ի վերայ նոցա, և զիտէ զհաւատարմութիւն նոցին, չմնայ այլ եւս ունկն դնել բանից Հայոց և Ցունաց, զի 'ի ժամանակի արդարասէր Թագաւորութեան ձերոյ սահմանեցաւ աշխարհի օրէնք արդարութեան, դթացէք ուրեմն 'ի վերայ տառապեալ և անկարող ազգատացն Հայոց, և սակս կարգադրութեան գործոց նոցին։ Դատաւորն եւ պաշտօնեայք չինութեան եւ բնակիչք քաղաքին եղիցին վերակացուք, անկողմնակալ